ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/123

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից 07.12.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 07.12.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

Սպիտակ համայնքի կարիքների համար Սպիտակ համայնքի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի արդիականացման և նոր համակարգերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով անցկացվել է ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերոնշված Ընթացակարգին, միասին մասնակցության հայտ են ներկայացրել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն և «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն): Ի դեպ,

մրցույթին մասնակցության հայտ ներկայացրել էին միայն նշված ընկերությունները (համատեղությամբ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.11.2018թ. ժամը 12:00 տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրությամբ, գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով ներկայացված հիմնավորող փաստաթղթերը՝ հայտնաբերել է անհամապատասխանություններ՝ համանման աշխատանքների պայմանագրի հետ կապված, և ծանուցել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու նշված անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում Ընկերության կողմից վերացվել են թերությունները և ներկայացվել նոր պայմանագրեր: Գնահատող հանձնաժողովի 30.11.2018թ. ժամը 12:00 տեղի ունեցած նիստի թիվ 7 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովն ուսումնասիրելով ներկայացված հիմնավորող փաստաթղթերը նորից հայտնաբերել է անհամապատասխանություններ՝ համանման աշխատանքների պայմանագրերի հետ կապված և այս անգամ արդեն մերժել հայտը:

Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի մերժումն անհիմն է:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 61-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերի.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները»:

Ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն.

«բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած

մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը»:

Վերը նշվածից պարզ է դառնում, որ և՛ Կարգի, և՛ Ընթացակարգի հրավերով հստակ սահմանված են այն փաստաթղթերը, որոնց ներկայացնելու դեպքում հայտը պետք է գնահատվի բավարար: Դրանք են.

1. նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները,

2. այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընկերությունը գնահատող հանձնաժողովին ներկայացրել է «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 23.09.2015թ. կնքված թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/31 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր 1) և հաշիվ-ապրանքագրի պատճենները, պայմանագրով կատարված աշխատանքների հանձնման-ընդունման ակտի պատճենը, ինչպես նաև Նորաբացի գյուղապետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 03.12.2015թ. կնքված թիվ ԱՄՆՀ ՊԸԱՇՁԲ 15/4 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր 2) և հաշիվ-ապրանքագրերի պատճենները, պայմանագրով կատարված աշխատանքների հանձնման-ընդունման ակտի պատճենը: Ի թիվս վկայակոչվածի Ընկերությունը ներկայացարել է նաև որպես լրացուցիչ փաստաթղթեր, տվյալ պայմանագրերի հետ կապված փաստաթղթերը, այդ թվում նաև գրագրությունները (ծավալաթերթեր, համադրման ակտեր, կատարողական ակտեր, միջանկյալ հանձնման-ընդունման ակտեր և այլն), որոնք թեև ըստ Կարգի և ընթացակարգի հրավերի պարտավոր չէր ներկայացնել: Կարգի 66-րդ կետով մասնակցին իրավունք է վերապահվում իր ցանկությամբ ներկայացնել այլ փաստաթղթեր և տեղեկություններ, հետևաբար, Ընկերությունը օգտվելով իր իրավունքից՝ գնահատող հանձնաժողովին ներկայացրել է իր մոտ գտնվող գրեթե բոլոր փաստաթղթերը, որոնք վերջինս «քննման» է ենթարկել և գտել անհամապատասխանություններ:

Այսպես.

Պայմանագիր 1-ի մասով գնահատող հանձնաժողովը որպես անհամապատասխանություն է դիտել ծավալաթերթ-նախահաշվի փոփոխությունը հիմնավորող փաստաթղթի բացակայությունը և հանձնման-ընդունման արձանագրության ամսաթվի տեխնիկական վրիպակը:

Ծավալաթերթը ստորագրված է պատվիրատուի և կատարողի կողմից, հետևաբար պետք է ելնել այն կանխավարկածից, որ ծավալաթերթը փոփոխելու հիմքը կողմերի մոտ առկա էր: Այլապես, դառնում է այնպես, որ մի պետական մարմին կասկածի տակ է դնում մեկ այլ պետական մարմնի գործողությունները ու պահանջում այդ գործողությունները հավաստող լրացուցիչ ապացույց, ինչը վարչարարության սկզբունքի խախտում է: Բացի դրանից, հարկ է նշել, որ Կարգով և Ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերի ցանկում ծավալաթերթ ներկայացնել չի պահանջվում:

Ինչ վերաբերվում է հանձնման-ընդունման արձանագրության ամսաթվին, ապա այն տեխնիկական վրիպակ էր՝ 2015թ. փոխարեն նշվել է 2018թ.: Նախ, թեև գնահատող հանձնաժողովը չի նշել, թե դա ինչ արձանագրություն է, բայց հարկ է ընդգծել, որ այդ արձանագրությունը միջանկյալ արձանագրություն է, որը հավաստում է թիվ 1 կատարողական ակտով հանձնվող աշխատանքները: Ի դեպ, այս արձանագրությունը նույնպես պահանջվող փաստաթղթերի ցանկում չկա: Տվյալ պայմանագրի աշխատանքները հանձնելու համար կազմված է թիվ 01 ակտը առ 29.12.2015թ., որը և պահանջվում էր Կարգով և Ընթացակարգի հրավերով: Նշված ակտի մասով անհապատասխանություն չի արձանագրվել: Հարկ է նշել նաև, որ գնահատող հանձնաժողովի կողմից նշված ակտի տարեթվի վրիպակը ապացուցվում է և կատարողական ակտի ամսաթվով, և դրանից հետո կնքված պայմանագրով կատարված աշխատանքները ֆիքսող ակտի ամսաթվով:

Պայմանագիր 2-ի մասով գնահատող հանձնաժողովը որպես անհամապատասխանություն է դիտել պայմանագրի գնի փոփոխությունը, որն ի դեպ նվազել է, պայամանգրի ժամկետն երկարացնելու վերաբերյալ կողմերի միջև կնքված համաձայնագիրը, հանձնման-ընդունման ակտերում պատվիրատուի հաշվեհամարների փոփոխությունը, հաշիվ-ապրանքնագրերից 4-ը ստորագրած չլինելը և մեկ հաշիվ-ապրանքագրում մատակարարման ամսաթիվը:

Այս պայամանագրի դեպքում ևս գնահատող հանձնաժողովը իրեն իրավունքներ վերապահելով քննել է մեկ այլ պետական պատվիրատուի գործողությունների իրավաչափությունը և դա դիտել Ընկերության փաստաթղթերի անհամապատասխանություն: Գնահատող հանձնաժողովի նման գործողությունները չեն կարող դիտվել իրավաչափ, քանի

որ նախ ներկայացված փաստաթղթերում առկա է Նորաբաց համայնքի ղեկավարի գրությունը Կատարողին, որը տվել է իր համաձայնությունը ժամկետը երկարացնելու վերաբերյալ՝ նշելով նաև պատճառները: Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովը ելնելով հավաստիության կանխավարկածից և քանի դեռ հակառակը չի ապացուցել, պարտավոր էր համաձայնագրի վերաբերյալ իր կարծիքները չմեկնաբանել ի վնաս Ընկերության:

Հանձնման–ընդունման ակտերի մասով գնահատող հանձնաժողովի եզրահանգումները նույնպես անհիմն են, քանի որ՝ նախ վերջինս այս դեպքում ևս «սխալներ» է գտել միջանկյալ հանձնման-ընդունման ակտերում, որը պահանջվող փաստաթղթերի ցանկում չկա: Ինչ վերաբերվում է պատվիրատուի հաշվեհամարի փոփոխությանը, ապա անհասկանալի է, թե դա ինչքանով է վերաբերելի մասնակցի փորձառությանը: Օրինակ, եթե ինչ-ինչ պատճառներով պատվիրատուի հաշվեհամարը փոխվել է, ապա դա ինչպես է ազդում Ընկերության փորձառությանը՝ պարզ չէ:

Անդրադառնալով հաշիվ ապրանքագրերին՝ պետք է նշել, որ թեև փաստացի ներկայացված հաշիվներից մի քանիսը տեխնիկական պատճառներով պատվիրատուի կողմից չեն ստորագրվել, բայց աշխատանքի արդյունքը ընդունվել է և բոլոր հաշիվների համար վճարվել է Ընկերությունը: Ավելին, վերջինս վճարել է նաև այդ հաշիվներից բխող հարկային բոլոր պարտավորությունները: Նշվածի մասով պատրաստ ենք ներկայացնել լրացուցիչ ապացույցներ:

Ինչ վերաբերում է հաշիվ-ապրանքագրերից մեկում մատակարարման ամսաթվին, ապա այս դեպքում ևս գնահատող հանձնաժողովը իրեն հարկային մարմնի լիազորություններ է վերապահել և առանց որևէ հիմնավորման այդ փաստը դիտել որպես անհամապատասխանություն՝ կասկածի տակ դնելով այս անգամ արդեն հարկային մարմնի գործարքների նկատմամբ վերահսկման գործառնությունը:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ վերը ներկայացված փաստական հանգամանքների և իրավական հիմնավորումների հիմքով, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները իրավաչափ չէին, հետևաբար վերջինիս կողմից Ընկերության հայտի մերժումը պետք է համարել անհիմն և վերացնել այն:

Գտնում ենք, որ նման որոշում կայացնելիս՝ գնահատող հանձնաժողովը խախտել է Կարգի 61-րդ կետի և Ընթացակարգի հայտի 2.5 կետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ դադարեցնել ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 30.11.2018թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 7 արձանագրության 1-ին և 2-րդ

կետերով կայացրած որոշումները և պարտավորեցնել ընդունել որոշում Ընկերության հայտը բավարարելու մասին:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Վարդան Հայրապետյանը:

2. <u>Սպիտակի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Սպիտակի համայնքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից 07.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 12.12.2018թ. թիվ 034/27-1408 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սպիտակ համայնքի կարիքների համար հայտարարված ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.11.2018թ. թիվ 6 արձանագրությամբ «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» և «Ույուտ Սենթր» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում (նմանատիպ աշխատանքների պայմանագրերում) արձանագրվել են անհամապատասխանություններ, որոնք մանրամասն նկարագրված են վերը նշված արձանագրության մեջ: Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ընկերություններին ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից որպես շտկված փաստաթղթեր ներկայացվել են երկու նոր պայմանագրեր, որոնք են՝ «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի և «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջև 2015 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/31 պայմանագիրը, ինչպես նաև «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի և Նորաբացի գյուղապետարանի միջև 2015 թվականի դեկտեմբերի 3-ին կնքված թիվ ԱՄՆՀ-ՊԸԱՇՁԲ-15/4 պայմանագիրը:

Առաջին պայմանագրի վերաբերյալ գնահատող հանձնաժողովը արձանագրել էր, որ պայմանագրի գնի փոփոխություն է կատարվել, սակայն այդ փոփոխությունը հիմնավորող փաստաթուղթը բացակայում է, ինչպես նաև պայմանագրի շրջանակներում կազմված թիվ 1 հանձնման-ընդունման արձանագրության կազմման տարեթիվ նշված է 29 դեկտեմբերի 2018թ:

Նշված անհամապատասխանությունների վերաբերյալ «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված բողոքում հղում է կատարել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ

526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 61-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերին և ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2.5 կետին, որտեղ նշված է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարված պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը՝ միաժամանակ հավելելով, որ հանձնման-ընդունման արձանագրությունը նշված փաստաթղթերի ցանկում ներառված չէ և ընկերությունը կարող էր չներկայացնել այն: Պետք է հաշվի առնել, որ «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի և «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջև 2015 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/31 պայմանագրի 7.3 կետում հստակ գրված է, որ պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը հանդիսանում է տվյալ պայմանագրի անբաժանելի մասը, հետևաբար, որպես հիմնավորող փաստաթուղթ պետք է ներկայացվեր նաև պայմանագրին կից կնքված յուրաքանչյուր համաձայնագիր, ինչը ընկերության կողմից չի արվել, այսինքն պայմանագրի փոփոխությունը հիմնավորող փաստաթուղթը բացակայում է, ինչն էլ արձանագրել է գնահատող հանձնաժողովը: Հիմնավորող փաստաթղթերը գնահատելիս՝ գնահատող հանձնաժողովը առաջնորդվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով և ոչ թէ կանխավարկածներով, իսկ պահանջվող փաստաթղթի բացակայությունը արձանագրելը գնահատող հանձնաժողովի կողմից վարչարարության խախտում դիտարկելն անհիմն է: Գնահատող հանձնաժողովը 30.11.2018թ. թիվ 7 արձանագրության մեջ պարզ նշել է, թե որ պայմանագրի մեջ է գնի փոփոխություն կատարվել, և որ հանձնման-ընդունման արձանագրությունն է կազմված գալիք 29.12.2018թ. ամսաթվով, ինչը մասնակցի կողմից դիտարկվում է որպես տեխնիկական վրիպակ: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ 29.12.2018թ. կազմված թիվ 1 հանձնման-ընդունման արձանագրությունը ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/31 պայմանագրի շրջանակներում կազմված միակ արձանագրությունն է, հետևաբար, այն չի կարող լինել մասնակցի կողմից նշված «միջանկյալ արձանագրություն»: Ինչ վերաբերում է

այն հանգամանքին, որ հանձնման-ընդունման արձանագրությունները հրավերով պահանջվող փաստաթղթերի ցանկում ներառված չեն, հարկ եմ համարում հղում կատարել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետին և ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2.5 կետին, որտեղ նշված է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: Վերը նշվածից հետևում է, որ մասնակցի կողմից պայմանագրի շրջանակներում կազմված հանձնման-ընդունման արձանագրությունները որպես հիմնավորող փաստաթուղթ ներկայացնելը կարգով և ընթացակարգի հրավերով ամրագրված պարտադիր պահանջ է և ոչ թէ մասնակցի իրավունքը:

«ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի և Նորաբացի գյուղապետարանի միջև 2015թ. դեկտեմբերի 3-ին կնքված թիվ ԱՄՆՀ-ՊԸԱՇՁԲ-15/4 պայմանագրի գնի փոփոխության հետ կապված (անկախ նրանից պայմանագրի գինը աճում է, թե՝ նվազում) հարկ եմ համարում հղում կատարել այդ պայմանագրի 8.4 կետին, որտեղ հստակ գրված է, որ պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը հանդիսանում է տվյալ պայմանագրի անբաժանելի մասը, այսինքն, այս պայմանագրի դեպքում էլ հիմնավորող փաստաթղթերի կազմում պետք է ներկայացվեր պայմանագրի փոփոխությունը ամրագրող համաձայնագիր, այն դեպքում երբ «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է տվյալ պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ կողմերի միջև 30.12.2015թ. կնքված թիվ 1 համաձայնագիրը, որով պայմանագրի ժամկետը երկարացվել է մինչև 16.06.2016թ.: Պետք է նշել, որ տվյալ համաձայնագիրը հակասում է ԱՄՆՀ-ՊԸԱՇՁԲ-15/4 պայմանագրի 8.5 կետին, որտեղ նշված է, որ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով: Նշված համաձայնագրի վերաբերյալ գնահատող հանձնաժողովը ընդամենը արձանագրել է առկա անհամապատասխանությունը պայմանագրի 8.5 կետով սահմանված պահանջներին: Ինչ վերաբերվում է ԱՄՆՀ-ՊԸԱՇՁԲ-15/4 պայմանագրի

շրջանակներում կազմված հանձնման-ընդունման արձանագրություններին, որոնք «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ն անվանում է «միջանկյալ հանձնման-ընդունման ակտեր», որոնք պահանջվող փաստաթղթերի ցանկում առկա չեն, կրկին անհրաժեշտ է հղում կատարել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետին և ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2.5 կետին:

Գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ԱՄՆՀ-ՊԸԱՇՁԲ-15/4 պայմանագրի շրջանակներում պայմանագրի կողմերի միջև 13 հունիսի 2016թ. կազմված և հաստատված թիվ 6 հանձնման-ընդունման արձանագրությունը կազմված է 2016 թվականի փետրվարի 1-ին կնքված թիվ ԱՄՆՀ ՊԸԱՇՁԲ-15/4/1 գնման լրացուցիչ պայմանագրի մասով, իսկ պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտը չի ներկայացվել: Հարկ է նշել, որ ԱՄՆՀ ՊԸԱՇՁԲ-15/4/1 գնման լրացուցիչ պայմանագիրը «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հիմնավորող փաստաթղթերի ցանկում ևս առկա չէ, ընկերության կողմից որևիցե ձևով չի մեկնաբանվել այդ անհամապատասխանությունը, իսկ գնահատող հանձնաժողովը գնահատել է միայն առկա փաստաթղթերը և չի հենվել կանխավարկածների վրա:

«ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի մեջ նշվում է, որ ԱՄՆՀ ՊԸԱՇՁԲ-15/4 պայմանագրի համար դուրս գրված թվով 6 հաշիվ ապրանքագրերից 4-ը պատվիրատուի կողմից տեխնիկական պատճառներով չեն հաստատվել էլեկտրոնային ստորագրությամբ: Ինչ վերաբերում է Ա9197699717 հաշիվ ապրանքագրին, ապա պարզ երևում է, որ մատակարարման ամսաթիվ նշված է 01.03.2016թ., իսկ դուրս գրման ամսաթիվ նշված է 17.11.2016թ., այսինքն հաշիվ ապրանքագիրը դուրս է գրվել պայմանագրի ժամկետը լրանալուց 5 ամիս հետո (եթե հիմք ընդունենք 30.12.2016թ. թիվ 1 համաձայնագիրը): Ընդ որում տվյալ հաշիվ ապրանքագրի գումարի չափին համապատասխան հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտը կազմված են 01.03.2016թ. ամսաթվով:

Գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումների հիմնավորվածությունը հավաստելու համար բողոքներ քննող անձին կներկայացվեն գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» և «Ույուտ Սենթր» ՍՊ ընկերությունների կողմից սահմանված ժամկետներում ներկայացված որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև սահմանված ժամկետից դուրս ներկայացված թիվ 1 համաձայնագիրը, որը վերաբերվում է

«ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի և «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջև 2015 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/31 պայմանագրին: Բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրում եմ այն հանգամանքին, որ «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետից դուրս հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված համաձայնագրի մասով նշել է, որ այն կազմում է պայմանագրի անբաժանելի մասը, սակայն բողոքի մեջ բազմիցս նշում է, որ պարտավոր չէր համանման պայմանագրից, հաշիվ ապրանքագրից և հանձնման-ընդունման ակտից բացի որևէ հիմնավորող լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնել («ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից հանձնաժողովի քարտուղարին ուղարկված հաղորդագրության հիմնավորումը նունպես կներկայացվի բողոքներ քննող անձին: Նշվածից պարզ երևում է, որ «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի կատարած գործողությունները և ներկայացված բողոքի բովանդակությունը հակասում են իրար:

Հաշվի առնելով վերոգրալը, Սպիտակի համայնքապետարանը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կատարած գործողությունները օրինաչափ են, կայացրած որոշումները բխում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներից: Ինչ վերաբերում է «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքին, Սպիտակի համայնքապետարանը գտնում է, որ այն ամբողջությամբ անհիմն է և ամբողջությամբ ենթակա է մերժման»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Արսեն Ավետիսյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/123 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձիի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից 07.12.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1 ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 27.11.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 6 և 30.11.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 7 արձանագրությունները, «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի և «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը.

Սպիտակ համայնքի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի արդիականացման և նոր համակարգերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի և «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի կոնսորցիումը (այսուհետ՝ նաև Կոնսորցիում):

Հրավերով սահմանվել է, որ Ընթացակարգի գնման առարկա են հանդիսանում «Սպիտակ համայնքի կարիքների համար Սպիտակ համայնքի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի արդիականացման եվ նոր համակարգերի կառուցման աշխատանքները»:

Նույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են բնակելի, հասարակական, արտադրական, և Էներգետիկ լիցենզիաները:

ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1 ծածկագրով բաց մրցույթի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն հրավերով սահմանված առավելագույն գնի հիսուն տոկոսից: Ընդ որում, առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն հրավերով սահմանված առավելագույն գնի քսան տոկոսից:

բ. նույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման

արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Նույն կետի համաձայն՝ նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում նույն հրավերով պահանջվող լիցենզիաների շրջանակներում աշխատանքների կատարված լինելը (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):

Հանձնաժողովը 09.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի և «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի կոնսորցիումի գնային առաջարկը կազմել է 99,060,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), և նույն արձանագրության 2.1 կետով Կոնսորցիումը ճանաչվել է Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Հանձնաժողովի 27.11.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 19.11.2018թ, թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/90 որոշումը, որոշել է վերսկսել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի և «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից ներկայացված հայտի գնահատումը:

«ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում որպես նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագիր, Կոնսորցիումը Հանձնաժողովին է ներկայացրել «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 23.09.2015թ. կնքված թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/32 գնման պայմանագիրը: Պայմանագրի առարկա է հանդիսանում «Ճյուղ Բջնի» 110կ/վ մեկուսիչների փոխման և բացակայող ճոպանի մոնտաժային աշխատանքները, պայմանագրի ծավալը գումարային արտահայտությամբ՝ 35,640,000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ): Ներկայացվել է նաև պայմանագրի մաս կազմող 04.09.2015թ. թվագրված թիվ 1 համաձայնագիրը, որով պայմանագրի ընդհանուր գինը սահմանվել է 35,346,124 ՀՀ դրամ, և փոփոխված ծավալաթերթ-նախահաշիվը, որը թվագրված է 09.11.2015թ.:

Ուսումնասիրելով վերը նշված պայմանագիրը՝ Հանձնաժողովը 27.11.2018թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ արձանագրել է մի շարք անհամապատասխանություններ: Մասնավորապես, «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/32 գնման պայմանագիրը կնքվել է 23.09.2015թ., մինչդեռ

այդ պայմանագրի մաս կազմող՝ պայմանագրի գնի նվազեցման վերաբերյալ համաձայնագիրը կողմերը ստորագրել են 04.09.2015թ., ինչը նշանակում է, որ պայմանագրի մաս կազմող համաձայնագիրը վավերացվել է ավելի վաղ, քան պայմանագրի ստորագրման ամսաթիվն է, ինչպես նաև նույն համաձայնագրին կից ներկայացված նոր ծավալաթերթ-նախահաշիվ հավելվածում պայմանագրի կնքման տարեթիվը նշված է 09.11.2015թ.:

Նույն արձանագրության 1-ին կետով հանձնաժողովը որոշել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի և «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի կոնսորցիումին ծանուցել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Կոնսորցիումի կողմից Հանձնաժողովին են ներկայացվել՝

1.«Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 23.09.2015թ. կնքված թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/31 գնման պայմանագիրը: Պայմանագրի առարկա է հանդիսանում «Էջմիածին» ՕԳ-ի թիվ 15-68 թռիչքներում ամպրոպապաշտպան ճոպանի մոնտաժային աշխատանքները, 110 կ/վ մեկուսիչների փոխման և բացակայող ճոպանի մոնտաժային աշխատանքները, պայմանագրի ծավալը գումարային արտահայտությամբ՝ 27,969,480 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ): Պայմանագրին կից ներկայացվել է Հավելված 1-ով նախատեսված փոփոխված ծավալաթերթ-նախահաշիվը, ինչպես նաև 29.12.2018թ.-ով թվագրված կատարված աշխատանքների N01 հանձնման-ընդունման արձանագրությունը և 29.12.2015թ.-ով թվագրված հաշիվ-ապրանքագիրը:

2. Նորաբացի գյուղապետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 03.11.2015թ. կնքված թիվ ԱՄՆՀ-ՊԸԱՇՁԲ-15/4 գնման պայմանագիրը: Պայմանագրի առարկա է հանդիսանում Նորաբաց համայնքի Երևանյան, Դպրոցականների, Կենտրոնական, Արարատյան և Երիտասարդական փողոցների արտաքին լուսավորության վերակառուցման աշխատանքները: Պայմանագրի ծավալը գումարային արտահայտությամբ՝ 16,583,400 ՀՀ դրամ է: Պայմանագրին կից ներկայացվել է Նորաբացի գյուղապետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 30.12.2015թ. կնքված N1 համաձայնագիրը, որով կողմերը, հիմք ընդունելով անբարենպաստ եղանակային պայմանները, որոշել են երկարաձգել պայմանագրի վերջնաժամկետը մինչև 16.06.2016թ.: Ներկայացվել են նաև պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման հանձնման-ընդունման արձանագրությունները և համապատասխան հաշիվ-ապրանքագրերը:

Հանձնաժողովը 30.11.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 7 արձանագրությամբ արձանագրել է, որ սահմանված ժամկետում Կոնսորցիումի կողմից ներկայացվել են

համանման աշխատանքների կատարման երկու պայմանագրեր, որոնք ուսումնասիրելու ընթացքում Հանձնաժողովը հայտնաբերել է անհամապատասխանություններ:

Մասնավորապես.

1.«Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 23.09.2015թ. կնքված թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/31 գնման պայմանագրի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ պայմանագրով նախատեսված աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը փոփոխվել է, որի արդյունքում պայմանագրի գինը դարձել է 27,024,562 ՀՀ դրամ, սակայն այդ փոփոխությունները հիմնավորող որևէ փաստաթուղթ՝ համաձայնագիր, Ընկերության կողմից չի ներկայացվել, իսկ պայմանագրի կատարման արդյունքի հանձնման-ընդունման արձանագրությունը թվագրված է 29.12.2018թ.-ով:

2. Նորաբացի գյուղապետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 03.11.2015թ. կնքվել է թիվ ԱՄՆՀ-ՊԸԱՇՁԲ-15/4 գնման պայմանագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 30.12.2015թ.: 13.06.2018թ. կազմված համադրման ակտի համաձայն պայմանագրի գինը նվազել է և դարձել է 16,133,300 ՀՀ դրամ: 30.12.2015թ. կողմերի միջև կնքված թիվ 1 համաձայնագրով պայմանագրի ժանկետը երկարաձգվել է մինչև 16.06.2016թ., ինչը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքին և նշված պայմանագրի 8.5 կետին, որտեղ նշված է, որ պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով: Նշված պայմանագրի թիվ 6 հանձնման-ընդունման արձանագրությունը կազմված է 01.02.2016թ. կնքված ԱՄՆՀ-ՊԸԱՇՁԲ-15/4 լրացուցիչ պայմանագրի (համաձայնագրի) մասով, որը սակայն Ընկերության կողմից Հանձնաժողովին չի ներկայացվել, ինչպես նաև ԱՄՆՀ-ՊԸԱՇՁԲ-15/4 գնման պայմանագրում և հանձնման-ընդունման արձանագրություններում պատվիրատուի հաշվեհեմարները տարբեր են:

Բացի այդ, Հանձնաժողովն արձանագրել է, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքների համար «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից դուրս գրված թվով վեց հաշիվ ապրանքագրերից չորսը (ՆԱ1796176762 առ 04.02.2016թ, ՆԱ6908994132 առ 04.02.2016թ, ՆԱ8855176118 առ 23.02.2016թ, ՆԱ4173488819 առ 23.02.2016թ.) պատվիրատուի կողմից ստորագրված չեն, իսկ ՆԱ9197699717 հաշիվ ապրանքագրի մեջ մատակարարման ամսաթիվը նշվել է 01.03.2016թ., մինչդեռ հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվն է 17.11.2016թ.:

Հաշվի առնելով նշված անհամապատասխանությունները՝ Հանձնաժողովը որոշել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ը և «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ը կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի մոտ կայացած նիստի ժամանակ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդեց Բողոքն ամբողջությամբ և հավելեց, որ ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը Կոնսորցիումի կողմից ներկայացված՝ նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերի գնահատման ընթացքում ցուցաբերել է ակնհայտորեն կանխակալ և ոչ օբյեկտիվ մոտեցում, որպես անհամապատասխանություն դիտարկելով առաջին դեպքում՝ («Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 23.09.2015թ. կնքված թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/32 գնման պայմանագիրը և դրա մաս կազմող թիվ 1 համաձայնագիր) տեխնիկական վրիպակի արդյունքում՝ պայմանագրի գնի նվազեցման վերաբերյալ համաձայնագրի ավելի վաղ ամսաթվով թվագրված լինելու հանգամանքը, իսկ երկրորդ դեպքում («Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 23.09.2015թ. կնքված թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/31 գնման պայմանագիր)՝ պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվի փոփոխությունը հիմնավորող փաստաթղթի բացակայությունը, ինչպես նաև հանձնման-ընդունման արձանագրության ամսաթվի տեխնիկական վրիպակը:

Ընկերության ներկայացուցիչը կարծիք հայտնեց, որ Հանձնաժողովը՝ կասկածի տակ առնելով պայմանագրի կողմերի գործողությունների իրավաչափությունը և այդ գործողությունների լրացուցիչ ապացույցներ պահանջելով՝ իրականացրել է օրենսդրությամբ իրեն չվերապահված լիազորություններ: Իսկ ինչ վերաբերում է Կոնսորցիումի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվին, ապա Ընկերության ներկայացուցչի խոսքով, այն հրավերով պահանջվող փաստաթուղթ չի հանդիսանում, և Կոնսորցիումի կողմից ներկայացվել է որպես լրացուցիչ փաստաթուղթ: Ինչ վերաբերվում է հանձնման-ընդունման արձանագրության ամսաթվին, ապա Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ այն տեխնիկական վրիպակ է՝ 2015թ. փոխարեն նշվել է 2018թ.: Վերջինս ընդգծեց, որ այդ արձանագրությունը միջանկյալ արձանագրություն է, որը հավաստում է թիվ 1 կատարողական ակտով հանձնվող աշխատանքները և նույնպես պահանջվող փաստաթղթերի ցանկում չկա: Տվյալ պայմանագրի աշխատանքները հանձնելու համար կազմված է թիվ 01 ակտը առ 29.12.2015թ., որը և պահանջվում էր Կարգով և Ընթացակարգի հրավերով, և որի մասով անհապատասխանություն չի արձանագրվել: Ընկերության ներկայացուցիչը նշեց նաև, որ գնահատող հանձնաժողովի կողմից նշված ակտի տարեթվի

վրիպակը ապացուցվում է և կատարողական ակտի ամսաթվով, և դրանից հետո կնքված պայմանագրով կատարված աշխատանքները ֆիքսող ակտի ամսաթվով:

Նորաբացի գյուղապետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 03.11.2015թ. կնքված թիվ ԱՄՆՀ-ՊԸԱՇՁԲ-15/4 գնման պայմանագրի մասով գնահատող հանձնաժողովը որպես անհամապատասխանություն է դիտել իբր առանց համապատասխան համաձայնագրի պայմանագրի գնի փոփոխությունը, համաձայնագիր 1-ով նախատեսված պայամանագրի ժամկետի երկարաձգումը, հանձնման-ընդունման ակտերում պատվիրատուի հաշվեհամարների տարբերությունը, հաշիվ-ապրանքնագրերից չորսը ստորագրած չլինելը և մեկ հաշիվ-ապրանքագրում մատակարարման ամսաթիվը:

Վերը նված պայամանագրի առնչությամբ Ընկերության ներկայացուցիչը նշեց, որ իր կողմից ներկայացված փաստաթղթերում առկա է Նորաբաց համայնքի ղեկավարի գրությունը «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին, որով Նորաբաց համայնքի ղեկավարը տվել է իր համաձայնությունը պայմանագրի ժամկետը երկարացնելու վերաբերյալ՝ նշելով նաև պատճառները: Հանձնման–ընդունման ակտերի մասով գնահատող հանձնաժողովի եզրահանգումները նույնպես անհիմն են, քանի որ վերջինս այս դեպքում ևս անհամապատասխանություններ է հայտնաբերել միջանկյալ հանձնման-ընդունման ակտերում, որոնք պահանջվող փաստաթղթերի ցանկում չկան: Անդրադառնալով հաշիվ ապրանքագրերին՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչը նշեց, որ թեև փաստացի ներկայացված հաշիվներից մի քանիսը տեխնիկական պատճառներով պատվիրատուի կողմից չեն ստորագրվել, սակայն աշխատանքի արդյունքն ընդունվել է և բոլոր հաշիվների համար վճարվել է Ընկերությունը: Ավելին, վերջինս վճարել է նաև այդ հաշիվներից բխող հարկային բոլոր պարտավորությունները:

Ինչ վերաբերում է հաշիվ-ապրանքագրերից մեկում մատակարարման ամսաթվին, ապա այս դեպքում ևս Հանձնաժողովը իրեն օրենսդրությամբ չնախատեսված լիազորություններ է վերապահել և առանց որևէ հիմնավորման այդ փաստը դիտել որպես անհամապատասխանություն՝ կասկածի տակ դնելով այս անգամ արդեն հարկային մարմնի գործարքների նկատմամբ վերահսկման գործառնությունը:

Պատվիրատուի ներկայացուցիչը պնդեց Բողոքներ քննող անձին ներկայացված դիրքորոշումը և հավելեց, որ Կոնսորցիումի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը Հանձնաժողովի կողմից մանրամասն քննության են ենթարկվել և գնահատվել են՝ հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Հրավերով սահմանված պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Նույն մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

• 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

• 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1)հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ

հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Բողոքի քննության շրջանակներում Բողոքներ քննող անձը 20.12.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ/1/23773-18 գրությամբ հարցում է ներկայացրել «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին՝ նշելով հետևյալը.

««Վահրադյան Շին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից 07.12.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին (այսուհետ՝ Բողոքը քննող անձ) ներկայացվել է բողոք:

Ընկերությունը «ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում (այսուհետ՝ մրցույթ), որպես որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացրել է «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 23.09.2015թ. կնքված թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/32 գնման պայմանագիրը և դրա մաս կազմող թիվ 1 համաձայնագիրն, ինչպես նաև «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 23.09.2015թ. կնքված թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/31 գնման պայմանագիրը:

Վերը նշված փաստաթղթերի գնահատման ընթացքում մրցույթի գնահատող հանձնաժողովն արձանագրել է մի շարք անհամապատասխանություններ, որոնք վիճարկվում են «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքով:

Մասնավորապես.

1. «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/32 գնման պայմանագիրը կնքվել է 23.09.2015թ., մինչդեռ այդ պայմանագրի մաս կազմող՝ պայմանագրի գնի նվազեցման վերաբերյալ համաձայնագիրը կողմերը ստորագրել են 04.09.2018թ., այսինքն, ավելի վաղ, քան պայմանագրի ստորագրման ամսաթիվն է, ինչպես նաև նույն համաձայնագրին կից ներկայացված նոր ծավալաթերթ-նախահաշիվ հավելվածում պայմանագրի կնքման տարեթիվը նշված է 09.11.2015թ.:

2. «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 23.09.2015թ. թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/31 գնման պայմանագրի գինը կազմել է 27,969,480 ՀՀ դրամ: Ընկերությունը ներկայացրել է «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից կնքված փոփոխված աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվ, որի համաձայն կատարված փոփոխությունների արդյունքում պայմանագրի գինը նվազել է և կազմել է 27,024,562 ՀՀ դրամ, սակայն այդ փոփոխությունները հիմնավորող որևէ փաստաթուղթ՝ համաձայնագիր, Ընկերության կողմից չի ներկայացվել, իսկ պայմանագրի կատարման արդյունքի հանձնման-ընդունման արձանագրությունը թվագրված է 29.12.2018թ.-ով, մինչդեռ նույն արձանագրության մեջ նշվել է, որ աշխատանքները փաստացի իրականացվել են 23.09.2015թ.-29.12.2015թ.:

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից 07.12.2018թ. ներկայացված բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով խնդրում եմ Ձեր հանձնարարականը «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի համապատասխան ստորաբաժանմանը՝ հնարավորինս սեղմ ժամկետներում պարզաբանումներ տրամադրելու վերը նշված անհամապատասխանությունների վերաբերյալ»:

Բողոքներ քննող անձը 20.12.2018թ. ԳԲԽ-ԷՍ/1/23772-18 գրությամբ հարցում է ներկայացրել նաև Նորաբաց համայնքի ղեկավարին՝ հետևյալ բովանդակությամբ.

««Վահրադյան Շին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից 07.12.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին (այսուհետ՝ բողոքը քննող անձ) ներկայացվել է բողոք:

Ընկերությունը «ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում (այսուհետ՝ մրցույթ), որպես որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացրել է Նորաբացի գյուղապետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 03.11.2015թ. կնքված թիվ ԱՄՆՀ-ՊԸԱՇՁԲ-15/4 գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Վերը նշված փաստաթղթի գնահատման ընթացքում մրցույթի գնահատող հանձնաժողովն արձանագրել է մի շարք անհամապատասխանություններ, որոնք վիճարկվում են «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքով:

Մասնավորապես.

Նորաբացի գյուղապետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 03.11.2015թ. կնքվել է թիվ ԱՄՆՀ-ՊԸԱՇՁԲ-15/4 գնման պայմանագիրը՝ 16,583,400 ՀՀ դրամի չափով, և Պայմանագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 30.12.2015թ.: 13.06.2018թ. կազմված համադրման ակտի համաձայն պայմանագրի գինը նվազել է և դարձել է 16,133,300 ՀՀ դրամ:

Նշված պայմանագրի թիվ 6 հանձնման-ընդունման արձանագրությունը կազմված է 01.02.2016թ. կնքված ԱՄՆՀ-ՊԸԱՇՁԲ-15/4 լրացուցիչ պայմանագրի (համաձայնագրի) մասով, որը սակայն Ընկերության կողմից Հանձնաժողովին չի ներկայացվել:

Բացի այդ, Պայմանագրով նախատեսված աշխատանքների համար «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից դուրս գրված թվով վեց հաշիվ ապրանքագրերից չորսը (ՆԱ1796176762 առ 04.02.2016թ, ՆԱ6908994132 առ 04.02.2016թ, ՆԱ8855176118 առ 23.02.2016թ, ՆԱ4173488819 առ 23.02.2016թ.) պատվիրատուի կողմից ստորագրված չեն, իսկ

NԱ9197699717 հաշիվ ապրանքագրի մեջ մատակարարման ամսաթիվը նշվել է 01.03.2016թ., մինչդեռ հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվն է 17.11.2016թ.:

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից 07.12.2018թ. ներկայացված բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով խնդրում եմ Ձեր հանձնարարականը Նորաբացի գյուղապետարանի համապատասխան ստորաբաժանմանը՝ հնարավորինս սեղմ ժամկետներում պարզաբանելու՝

1.արդյո՞ք կողմերի միջև կնքվել է նշված փոփոխությունը, թե՝ ոչ, և եթե այո, ապա խնդրում ենք տրամադրել դրա պատճենը;

2. հիշյալ հաշիվ ապրանքագրերի՝ պատվիրատուի կողմից ստորագրված չլինելու պատճառների մասին;

3. թե ե՞րբ են փաստացի իրականացվել N Ա9197699717 հաշիվ ապրանքագրում նշված աշխատանքները»:

Վերը նշված հարցումներին ի պատասխան, սակայն, որևէ պարզաբանում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձն ուսումնասիրելով Կոնսորցիումի կողմից ներկայացված՝ նախկինում կատարված պայմանագրերը՝ արձանագրում է, որ.

- «ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում որպես նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագիր, Կոնսորցիումը Հանձնաժողովին է ներկայացրել «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 23.09.2015թ. կնքված թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/32 գնման պայմանագիրը: Պայմանագրի ծավալը գումարային արտահայտությամբ կազմել է 35,640,000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ): Պայմանագրին կից ներկայացվել է նաև պայմանագրի մաս կազմող 04.09.2015թ. կնքված թիվ 1 համաձայնագիրը, որով պայմանագրի ընդհանուր գինը սահմանվել է 35,346,124 ՀՀ դրամ, ինչպես նաև փոփոխված ծավալաթերթ-նախահաշիվը, որը թվագրված է 09.11.2015թ.:

-Ուսումնասիրելով վերը նշված պայմանագիրը՝ Հանձնաժողովն արձանագրել է անհամապատասխանություններ: Մասնավորապես, «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/32 գնման պայմանագիրը կնքվել է 23.09.2015թ., մինչդեռ այդ պայմանագրի մաս կազմող՝ պայմանագրի գնի նվազեցման վերաբերյալ համաձայնագիրը կնքվել է 04.09.2015թ., ինչպես նաև նույն համաձայնագրին կից ներկայացված նոր ծավալաթերթ-նախահաշիվ հավելվածում պայմանագրի կնքման տարեթիվը նշված է 09.11.2015թ.:

- Հանձնաժողովը որոշել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի և «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի կոնսորցիումին ծանուցել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

- Կոնսորցիումի կողմից սահմանված ժամկետում Հանձնաժողովին են ներկայացվել՝

1.«Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 23.09.2015թ. կնքված թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/31 գնման պայմանագիրը: Պայմանագրի ծավալը գումարային արտահայտությամբ կազմել է 27,969,480 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ): Պայմանագրին կից ներկայացվել է Հավելված 1-ով նախատեսված փոփոխված ծավալաթերթ-նախահաշիվը, ինչպես նաև 29.12.2018թ.-ով թվագրված կատարված աշխատանքների N01 հանձնման-ընդունման արձանագրությունը և 29.12.2015թ.-ով թվագրված հաշիվ-ապրանքագիրը:

2. Նորաբացի գյուղապետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 03.11.2015թ. կնքված թիվ ԱՄՆՀ-ՊԸԱՇՁԲ-15/4 գնման պայմանագիրը: Պայմանագրի ծավալը գումարային արտահայտությամբ կազմել է 16,583,400 ՀՀ դրամ: Պայմանագրին կից ներկայացվել է Նորաբացի գյուղապետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 30.12.2015թ. կնքված N1 համաձայնագիրը, որով կողմերը, հիմք ընդունելով անբարենպաստ եղանակային պայմանները, որոշել են երկարաձգել պայմանագրի վերջնաժամկետը մինչև 16.06.2016թ.: Ներկայացվել են պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման հանձնման-ընդունման արձանագրությունները և համապատասխան հաշիվ-ապրանքագրերը:

- Թիվ ԱՄՆՀ-ՊԸԱՇՁԲ-15/4 պայմանագրով նախատեսված աշխատանքների համար «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից դուրս գրված թվով վեց հաշիվ ապրանքագրերից չորսը (NԱ1796176762 առ 04.02.2016թ, NԱ6908994132 առ 04.02.2016թ, NԱ8855176118 առ 23.02.2016թ, NԱ4173488819 առ 23.02.2016թ.) պատվիրատուի կողմից ստորագրված չեն, իսկ NԱ9197699717 հաշիվ ապրանքագրի մեջ աշխատանքների հանձնման ամսաթիվը նշվել է 01.03.2016թ., մինչդեռ հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվն է 17.11.2016թ.:

Նկատի ունենալով վերը նշված փաստական հանգամանքները և իրավական կարգավորումները՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի և «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից ներկայացված՝ նախկինում կատարված «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 23.09.2015թ. կնքված թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/32 գնման պայմանագրի գնահատման ընթացքում, ինչպես նաև հետագայում՝ «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 23.09.2015թ. կնքված թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/31 և Նորաբացի

գյուղապետարանի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 03.11.2015թ. կնքված թիվ ԱՄՆՀ-ՊԸԱՇՁԲ-15/4 գնման պայմանագրերի գնահատման ընթացքում Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները վերաբերում են նշված փաստաթղթերի և դրանց անբաժանելի մաս հանդիսացող համաձայնագրերի կազմման առանձնահատկություններին, կրում են տեխնիկական, ոչ բովանդակային բնույթ, մինչդեռ Հանձնաժողովի խնդիրն է առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասնագիտական փորձի, որակավորման գնահատումը, որը և՛ Կարգով, և՛ Հրավերով սահմանված պահանջներին համապատասխան՝ պետք է իրականացվի վերջինիս կողմից նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենների, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) առկայության փաստը ստուգելու միջոցով, ինչը տվյալ դեպքում Կոնսորցիումի կողմից ապահովվել է:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ Հանձնաժողովը կարող էր օգտագործել Կոնսորցիումի ներկայացրած պայմանագրերի և դրանց մաս կազմող փաստաթղթերի իսկությունը ստուգելու՝ Կարգի 67-րդ կետով իրեն վերապահված իրավունքը՝ դիմելով համապատասխան իրավասու մարմիններին, և վերջիններից ստանալ արձանագրված անհամապատասանությունների վերաբերյալ գրավոր եզրակացություններ, ինչը տվյալ դեպքում Հանձնաժողովի կողմից չի իրականացվել:

Հաշվի առնելով, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի և «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի կոնսորցիումի կողմից ներկայացված՝ «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջև 23.09.2015թ. կնքված թիվ ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/32 գնման պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքները հանդիսանում են նմանատիպ՝ Ընթացակարգի Հրավերով պահանջվող լիցենզիաների շրջանակներում իրականացված աշխատանքներ, ինչպես նաև այն, որ Կոնսորցիումի կողմից սահմանված կարգով ներկայացվել են ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-15/32 գնման պայմանագրի և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ դրա պատշաճ կատարումը հավաստելու համար՝ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող հանձնման-ընդունման արձանագրությունները, հետևաբար, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Կոնսորցիումի կողմից ըստ էության ապահովվել է ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1 ծածկագրով բաց մրցույթի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի «բ» պարբերություններով սահմանված՝ «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի գնահատման պահանջների

կատարումը, ուստի Հանձնաժողովը՝ Կոնսորցիումի հայտը գնահատելով Հրավերի պահանջներին չհամապատասխանող՝ գործել է ոչ իրավաչափ, խախտելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 07.12.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝

- 30.11.2018թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 7 արձանագրության 1-ին և 2-րդ կետերով կայացրած որոշումները դադարեցնելու մասին նախատեսված որոշում,
- Կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ